

## ԿՐԻՆԼԵՆՏԸ ՎԱՃԱՌՔԻ ՉԷ

Դանիոյ վարչապետ Մեթթե Ֆրետերիսըն ափսոսանք յայտնած է, որ ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի չէ փոխած Կրիմլենտի վերաբերեալ դիրքորոշումը: «Կրիմլենտը վաճառքի չէ: Մենք կ'ակնկալենք, որ բոլորը, ներառեալ մեր դաշնակիցները, յարգեն Կրիմլենտի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը, քանի որ մենք ինքնիշխան պետութիւն ենք, եւ մեզի անհրաժեշտ է, որ բոլորը յարգեն մեր տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը»: ԱՄՆ նախագահը ոչ միայն պնդած է, որ Կրիմլենտը պէտք է գտնուի Միացեալ Նահանգներու վերահսկողութեան տակ, այլեւ կրկնած է այն մեղադրանքը, որ Դանիան բաւականաչափ միջոցներ չի ձեռնարկեր այդ տարածքը պաշտպանելու համար:

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԸՐԱԻԵՐ ՆԱԽԱԳԱԸ ԱՌԻՆԻՆ

Ուաշինկթընի մէջ Լիբանանի դեսպանատունը յայտարարած է, որ Սպիտակ տունը պաշտօնական հրաւեր ուղարկած է Լիբանանի նախագահ ժոզէֆ Աուինի՝ 21 Յուլիսին այցելելու Ուաշինկթըն եւ հանդիպելու ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփի հետ:

Դեսպանատունը նշած է, որ այս հրաւերը կ'արտացոլէ Լիբանանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ ամուր գործընկերութիւնը եւ երկու նախագահներուն հնարաւորութիւն կու տայ քննարկելու փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր՝ երկկողմ յարաբերութիւններ, տարածաշրջանային անվտանգութիւն եւ ԱՄՆ-ի շարունակական աջակցութիւնը Լիբանանի ինքնիշխանութեան, կայունութեան, տարածքային ամբողջականութեան եւ պետական հիմնարկներուն: Այս այցը արդիւնք է Լիբանանի դեսպանատան դիւանագիտական տրամադրութեան, Լիբանանի նախագահութեան եւ ԱՄՆ վարչակազմի քարձրաստիճան պաշտօնէներու հետ սերտ համագործակցութեամբ, որուն ընթացքին դեսպանատունը աշխատած է բարձր մակարդակի երկխօսութիւնը խթանելու եւ այս պաշտօնական այցելութեան պայմանաւորաձուութիւնները կէտացնելու ուղղութեամբ: Դեսպանատունը նշած է, որ ինք կը համակարգէ նախագահ Աուինի այցելութեան բոլոր առումները՝ Լիբանանի նախագահութեան, Սպիտակ տան եւ ԱՄՆ Արտաքին գործերու նախարարութեան հետ սերտ համագործակցութեամբ, երկկողմ հանդիպման յաջողութիւնը ապահովելու համար:



Դեսպանատունը նշած է, որ այս հրաւերը կ'արտացոլէ Լիբանանի եւ Միացեալ Նահանգներու միջեւ ամուր գործընկերութիւնը եւ երկու նախագահներուն հնարաւորութիւն կու տայ քննարկելու փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր՝ երկկողմ յարաբերութիւններ, տարածաշրջանային անվտանգութիւն եւ ԱՄՆ-ի շարունակական աջակցութիւնը Լիբանանի ինքնիշխանութեան, կայունութեան, տարածքային ամբողջականութեան եւ պետական հիմնարկներուն: Այս այցը արդիւնք է Լիբանանի դեսպանատան դիւանագիտական տրամադրութեան, Լիբանանի նախագահութեան եւ ԱՄՆ վարչակազմի քարձրաստիճան պաշտօնէներու հետ սերտ համագործակցութեամբ, որուն ընթացքին դեսպանատունը աշխատած է բարձր մակարդակի երկխօսութիւնը խթանելու եւ այս պաշտօնական այցելութեան պայմանաւորաձուութիւնները կէտացնելու ուղղութեամբ: Դեսպանատունը նշած է, որ ինք կը համակարգէ նախագահ Աուինի այցելութեան բոլոր առումները՝ Լիբանանի նախագահութեան, Սպիտակ տան եւ ԱՄՆ Արտաքին գործերու նախարարութեան հետ սերտ համագործակցութեամբ, երկկողմ հանդիպման յաջողութիւնը ապահովելու համար:

որում՝ շիի համայնքին, որ ամենաբարձր գինը վճարեց հարաւի մէջ տեղի ունեցած պատերազմներուն համար: Նախագահը ըսաւ, որ իրենք կը շարունակեն ընթանալ իրենց կայացուցած որոշման ուղիով, լիբանանցի ժողովուրդին կողմէն ընելով պահպանելու հաւատքը Լիբանանի նկատմամբ, քանի որ ամէն ինչ կ'ընթանայ ճիշդ ուղղութեամբ՝ հակառակ խոչընդոտներուն եւ դժուարութիւններուն:

Նախագահ Աուին կ'ակնկալէ, որ իր յառաջիկայ այցը Ուաշինկթըն եւ Թրամփի հետ հանդիպումը դրական արդիւնքներ պիտի բերեն Լիբանանի համար, քանի որ այդ կ'արտացոլէ Լիբանանի նկատմամբ ամերիկեան անսխալադէպ հետաքրքրութիւնը եւ Միացեալ Նահանգներուն աջակցութիւնը՝ Լիբանանի դէմ իսրայելեան պատերազմներուն եւ յարձակումներուն մտայնութիւնը գտնելու, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ կայունութեան հասնելու համար:

Միւս կողմէ, ընդունելով վարչապետ Նաուաֆ Սալամը, նախագահ Աուին անոր հետ քննարկած է երկրին ընդհանուր իրավիճակը եւ հարաւի մէջ տեղի ունեցող զարգացումները՝ կեդրոնականով զինադադար ամրապնդելու եւ փորձական տարածքներէն իսրայելի դուրսբերումը արագացնելու անհրաժեշտութեան վրայ: Անդրադարձ եղած է նաեւ



անհրաժեշտ ճանապարհները բանալու, անբաժնութիւնները հեռացնելու եւ ենթակառուցութեան վերականգնելու նախապատրաստական աշխատանքներուն, որպէսզի բնակիչները կարենան վերադառնալ տուժած տարածքներ իսրայելեան ետքաշումէն յետոյ:

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍՕՏԱՆՈՒՄ

Քննարկումներ տեղի կ'ունենան խորհրդարանական ընտրութիւններուն թուականը մօտեցնելու հնարաւորութեան վերաբերեալ, չսպասելով երկու տարի երկարածման ժամկետին: Զաղաքական գործիչները լրջօրէն կը քննարկեն այս առաջարկը եւ այդ առումով միջազգային աջակցութիւն շօշափած են Լիբանանով մտահոգուած մայրաքաղաքներէ: Քննարկումները նաեւ կ'ընդգրկեն ընտրական օրէնքը, որ շատ հաւանաբար պիտի պահպանուի գործող օրէնքը, նկատի առնելով Լիբանանի քաղաքական համախոհութեան բացակայութիւնը ընտրական նոր օրէնքի մը շուրջ:

## ՀԱՅ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ՆԻՍ

Հայ քաղաքական կուսակցութիւններու համահայկական եւ լիբանանեան մարմիններու ներկայացուցիչները գումարեցին յատուկ նիստ, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 6 Յուլիս 2026-ին, «ԹԵՔԵՆԱՆ» կեդրոնին մէջ:

Ժողովականները հանգամանօրէն քննարկեցին տարածաշրջանային, լիբանանեան, հայաստանեան եւ համայնքային խնդիրներ, որոնց ուղղութեամբ ճշդեցին նաեւ ուղեւորային կէտեր:



Ա. Լիբանանեան քաղաքական եւ հասարակական դաշտը կը դիմագրաւէ հերթական դժուար փուլ՝ իսրայելեան շարունակուող յարձակումներու, դուրաքէլի հրահրարի, Լիբանան-Իսրայել համաձայնութեան ընդհատման ընթացքը բանակցութիւններու առումներով: Այս փուլին կը բացակայի քաղաքական եւ հասարակական դաշտին մէջ համալիբանանեան դիրքորոշումը: Կուսակցութիւններու ներկայացուցիչները, շեշտը դնելով ներլիբանանեան պառակտումնաբան ժխտական հետեւանքներուն վրայ, ընդգծեցին առաջնահերթ սկզբունքներուն կառչած մնալու անհրաժեշտութիւնը՝ զինադադարի յարգում, գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան անզիջելիութիւն: Այս զգայուն իրավիճակին մէջ հրամայական նկատուեցաւ ծայրայեղութիւններէ հեռու մնալը, ներլիբանանեան դաշտին մէջ բոլոր տեսակի սադրանքները մերժելը եւ բաժանարար գիծերը չխորացնելը՝ թէ՛ պետական եւ թէ՛ քաղաքացիական-հասարակական շրջանակներուն մէջ:

Բ. Լիբանանեան ճակատը նկատելով տարածաշրջանին մէջ զարգացող իրադարձութիւններու կարեւորագոյն հատուածը, ժողովականները լուսարձակի տակ առին Անքարայի նկրտումները՝ իրավիճակէն օգտուելով ազդեցութեան գոտիներ նուաճելու նպատակով: Անկախ հետադարձական մակարդակի վրայ արձանագրուող Իսրայել-Թուրքիա լարուածութեան, արձանագրուեցան այն փաստերը, որոնք շրջանին մէջ երկու երկիրներու զուգահեռ թափանցումներու եւ զինուորական ամկայութիւններու մասին կը վկայեն: Ան այդ, կուսակցութիւնները իրենց քաղաքական դիրքորոշումներուն ընթացքին նկատի կ'ունենան այս միտումները՝ զանոնք արժարժեքով իրենց քաղաքական-յարաբերական հանդիպումներուն:

Գ. Իսրայելի գործադիր իշխանութեան կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումի հանգամանքները քննարկելով, ժողովը հաստատեց անոր ընտրուած պահու քաղաքական մղումները, Իսրայել-Թուրքիա լարուող յարաբերութիւններու խորապատկերին վրայ: Այդ հանգամանքներուն կը ներառուի Իսրայելի ներգրաւումը արցախեան պատերազմին, Ատրպէյճանի հետ զարգացող թէ՛ տնտեսական եւ թէ՛ ռազմական մարզերու մէջ համագործակցութիւնը:

Դ. Հայ քաղաքական կուսակցութիւնները անդրադարձ կատարեցին նաեւ հայաստանեան իրադարձութիւններուն եւ ընդգծեցին, որ անկախ այնտեղ արձանագրուող իրադարձութիւններու նկատմամբ կուսակցութիւններու որդեգրած դիրքորոշումներէն, համահայկական հարցերու եւ առաջնային օրակարգերու շուրջ անխախտ կը մնան միջկուսակցական միացեալ կեցուածքները՝ Ցեղասպանութեան միջազգային ճանաչման, Արցախի ժողովուրդի իրաւունքներու վերականգնման, Պաքոյի մէջ անօրինաբար պահուող ռազմագործիչներու ազատ արձակման պահանջներու եւ համապատասխան աշխատանքներու ուղղութեամբ: Օրակարգի այս կետի քննարկումով շեշտուեցաւ համահայկական օրակարգերու շուրջ Սփիւռքի այլ շրջաններու մէջ եւս հանդիպումներու ձեռնարկելու եւ համակարգուած աշխատելու իրամայակակը:

Հայ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները պիտի շարունակեն գումարել նիստեր, քննարկելով տարածաշրջանային, լիբանանեան, համասփիւռքեան-համահայկական օրակարգի կէտեր:

ԸԱՅ ԹԵՐԹԸ ԸՆԿԵՐՆ Է ԸԱՅ ՏԱՆ

## ԹՐԱՄՓ ԿԸ ՄԵՐԺԷ ԳՈՐԾԱԿՅԻՆ ԻՐԱՆԻ ՇԵՏ

ԱՄՆ զինուած ուժերը հարուածած են Իրանը՝ ի պատասխան Հոթմուզի նեղուցով անցնող առետրային նաւերուն վրայ Իրանի վերջին յարձակումներուն: Իրանի մէջ գտնուող 80 թիրախները ներառած են հակաօդային պաշտպանութեան համակարգերը, հրամանատարական եւ վերահսկողական ցանցերը, ծովամերձ ռատարային կայանները, հակաձովային հրթիռային համակարգերը եւ Իսլամական յեղափոխութեան պահակազմի աւելի քան 60 փոքր նաւակներ:

Իրանը վերջերս յարձակած էր երեք առետրային նաւերու վրայ եւ ամերիկեան կողմը համարած է, որ իրանեան ուժերուն կողմէ այս անհիմն յարձակումը զինադադարի յստակ եւ վտանգաւոր խախտում է՝ խաթարելով նաւարկութեան ազատութիւնը:



ԱՄՆ-ի նոր հարուածներու մասին յայտարարութեանէն կարճ ժամանակ առաջ Ուաշինկթըն վերականգնած է նաեւ իրանեան քարիւղին նկատմամբ պատժամիջոցները, որոնք վերցուած էին երկու շաբաթ առաջ: «Իրանեան քարիւղի նկատմամբ ԱՄՆ պատժամիջոցներու վերականգնումը, ինչպէս նաեւ հարուածները համաձայնագրի լուրջ խախտում են», ըսած է Իրանի արտաքին գործերու փոխնախարար Ջազէմ Նարիպայատին: Միւս կողմէ, Իրանի Իսլամական յեղափոխութեան պահակազմը յայտարարած է, որ հրթիռներ եւ անօդաչու սարքեր արձակած է Պահրէյնի եւ Զուբայի 85 ամերիկեան ռազմական շէնքերու ուղղութեամբ՝ ի պատասխան Իրանի վրայ ամերիկեան վերջին հարուածներուն:

Իր կարգին, ԱՄՆ նախագահ Տոնալտ Թրամփ ըսած է, որ կը մերժէ գործ ունենալ Իրանի հետ, կարծիք յայտնելով որ փոխընթացին յուշագիրը աւարտած է եւ իրեն համար



հարցը փակուած է: Անքարային կատարած յայտարարութեան մէջ Թրամփ նշած է, որ «թոյլ պիտի չտանք, որ Իրանը միջուկային զէնք ունենայ: Անոնք խելագար են եւ հազարաւոր մարդիկ սպաննած են: Մենք շատ ժամանակ վատնած ենք Իրանի հետ, եւ պէտք է մեր գործը կատարենք»:

Ամերիկացի պաշտօնատար մը բացատրած է, որ Իրանին ուղղուած պատասխանը անմիջական պատասխան էր Հոթմուզի նեղուցով անցնող նաւերու դէմ անոր միջազգային ահաբեկչական գործողութիւններուն, Նշելով որ «իրանցիները կը գիտակցին իրենց անխոհեմ գործողութիւններուն հետեւանքները, սակայն անոնք ընտրած են իրականացնել այդ յարձակումները»: Ան յայտնած է, որ նախագահ Թրամփի հաստատած է Իրանը հարուածելու ծրագիրը եւ հրամայած է անոր իրականացումը ՆԱՅՕ-ի գազաբաժնորդիին համար Թուրքիա գտնուելու ընթացքին:

Իսրայելի վարչապետ Պենիափին Նեթանիահու իր կարգին ըսած է, որ իրանեան սպառնալիքը կը շարունակէ մնալ եւ Թեհրանը տակաւին ի վիճակի է վերականգնելու իր միջուկային ծրագիրը:

# ԱՂԱՍԻ (ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՐ-ՍԱՐԳԻՍԵԱՆ)

Պէյրուսի Խալիլ Պետեի թաղի Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի շրջանի «Աղասի» մասնաժողովը վերջերս, ջատագովելի նախաձեռնութեամբ մը, թաղի Հ.Ս.Ս. ակումբի մուտքին զետեղեց անուանի յեղափոխական Աղասիի դիմահարթաբանդակը: Պատշաճ հանդիսութեամբ կատարուած այն նախաձեռնութիւնը խթան կը հանդիսանայ անգամ մը եւս յիշելու եւ յիշեցնելու, թէ ո՛ր էր Աղասին: Մանաւանդ որ այս տարի կը լրանայ անոր ծննդեան 155-ամեակը:



Ծնած է 1871 Ապրիլ 16-ին, Կիլիկիոյ արծուբերն շահնէ անունը: Ծննդավայրին մէջ նախնական կրթութիւնը ստանալէ յետոյ, 1888-ին կ'երթայ Պոլիս՝ ուսումը շարունակելու նշանաւոր Կերտնական վարժարանէն ներս: Տաքարին պատանի, 1890-ին ան կը մասնակցի Ռուս Գաբուի արվկա-յարոյց ցոյցին, որուն ղեկավարներն էին Մեծն Սուրառ (Յամբարձում Պոյաճեան) եւ Յարութիւն Ճանկիլեան (Կայծիկ): Այդ դէպքէն ետք, երկու անգամ կը բանտարկուի եւ յատուկ միջամտութեամբ ազատ կ'արձակուի: Այդ օրերուն եղած է քարտուղարը իր համաքաղաքացի Մեծն Սուրառի, որուն հետ ուներ մօտիկ կապեր: Միաժամանակ «Տօրոցի» ստորագրութեամբ կ'աշխատակցի հնչակեան մամուլին («Հնչակ», «Մարտ» եւ այլն): 1891-ի աշնան կը դատաւարուի մահուան, որմէ ետք կը փախչի Երուսաղէմ: Սակայն, մէկ տարի ետք (1892-ի աշուն), անհանդարտ Աղասի կը վերադառնայ Կիլիկիա՝ որպէս Հնչակեան կուսակցութեան Կիլիկիոյ ընդհանուր ներկայացուցիչ: Պէյրուսի մէջ կը ձերբակալուի: Երբ ոստիկանի մը հսկողութեամբ Պոլիս կ'ուղարկուի, ճանապարհին կը յաջողի խոյս տալ եւ կը մնայ Ամանուսի մէջ, ուր եւ կը սկսի ծաւալել յեղափոխական աշխատանքներ՝ ցանելով հունտերը ազատագրական պայքարի: Անի բան երեք տարի կը շրջագայի գիւղէ գիւղ՝ ժողովուրդը նախապատրաստելով ըմբոստութեան՝ օսմանեան լուծին դէմ: Այս առաքելութեան ճամբուն վրայ կը հասնի մինչեւ Չեյթուն եւ հոն հնչակեան հինգ ընկերներու հետ (Վեց Պարոններ), 1895-ին հմտօրէն կը ղեկավարէ Չեյթունի յարակաւն ապստամբութիւնը: 1896-ի Մարտ մէկին, ապստամբութենէն ետք, զինք կ'արտօսեն փոխադրուի Երուսաղէմ պետական միջոցներով: 1897-ին կը հաստատուի Փարիզ եւ հոն կը ծանօթանայ Պողոս Նուպար փաշային եւ երկու տարի կը մնայ անոր մօտ: Հոն կը գրէ Չեյթունի պատմութիւնը իր պատմագիտական, աշխարհագրական, ազգագրական, լեզուական, յարակից գիւղերու, ազգաբնակչութեան շահեկան տուեալներով, Չեյթունի ներքին կեանքին եւ պատմական ապստամբութեան մասին արժէքաւոր նկարագրով: Հատորը ֆրանսերէնի կը թարգմանէ անուանի գրագետ Արշակ Զօպանեան եւ լոյս կը տեսնէ Պողոս Նուպար փաշայի մեկնաստութեամբ: Փաշային հոգածութեամբ, 1898-էն կը շարունակէ ուսումնառութիւնը, որ կ'աւարտէ 1902-ին: Արդ ժամանակ Փարիզ մնալէ յետոյ կը փոխադրուի ԱՄՆ եւ Նիւ Եորքի մէջ կը հիմնէ բազմալեզու տպարան մը: Կ'ամուսնանայ ֆրանսուհիի մը հետ: Անի ուշ՝ 1922-ին կը վերադառնայ Փարիզ: 1938-ին կը վերամշակէ Չեյթունի նուիրուած գիրքը: Սոյն գիրքը հայերէնով լոյս կը տեսնէ 1968-ին, Պէյրուս, Շիրակ տպարանէն, նախաձեռնութեամբ Փարիզի Հանոյ Հայրենակցական Միութեան եւ հովանաւորութեամբ Հանոյ Հայրենակցական Միութեան Մերձաւոր Արեւելքի Կեդրոնական Վարչութեան:

## ԱՄԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ (Նիկոսիա)

Մեծ յեղափոխականը կը մահանայ 1941-ին եւ կը թաղուի Փարիզի արուարձաններէն Կիլիկի լը Ռուայի ընտանեկան դամբարանին մէջ: Իր եղբայրը՝ Ղեւոնդ Ծ. վրդ. Թուր-Սարգիսեան եղած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան ու կաթողիկոսական փոխանորդ եւ վախճանած կանխահասօրէն՝ առողջական պատճառներով, Կ. Պոլսոյ մէջ: Ան ղեկավարած է Սիսի ինքնապաշտպանութիւնը 1909-ի Ատանայի ջարդերու ընթացքին:

Բնականաբար, Աղասիի անունը երբ կը տրուի, անմիջապէս անոր կը կապակցուի Չեյթունի 1895-ի ապստամբութիւնը: Սակայն, կայ աւելի հետաքրքրական եւ խորագլխի ուսումնասիրութեան կարիքը ունեցող ոլորտ մը, որ ափսոսալիօրէն ցարդ մնացած է ստուերի տակ: Խօսքը կը վերաբերի 1892-1895 թուականներուն անոր ունեցած անաղմուկ եւ տարածուն գործունէութեան Սուեւիոյ շրջանին մէջ (Սուաա Լեռան յարակից շրջաններ), հասնելով մինչեւ Զեսապ: Այդ շրջանի թողլքուած գիւղերը, չարքաշ պայմաններու տակ ապրող բնակչութիւնը, հայութեան մեծ հատուածին համար անծանօթ եւ անկոխ այդ տարածքը Աղասիի եւ իր զինակից ընկերներուն շնորհիւ կարծեք վերադարձան հայութեան գիրկը: Խոնարհ եւ անուս գիւղացիք անդրադարձան իրենց ծանր պայմաններուն եւ սկսան մտտալ եւ ապա գործել յանուն ազգային արժանապատուութեան՝ ի պահանջել հարկին զէն ի ձեռնի:

Բարեբախտաբար, Աղասի իր այդ ժամանակաշրջանի գործունէութիւնը յուշագրած է սերունդներուն համար: «Արարատ» օրաթերթի մատենաշարին թիւ 45-ը նուիրուած է Սուեւիոյ մէջ Հնչակեան կուսակցութեան գործունէութեան, լոյս տեսած 1957-ին: Այդ հատորին մէջ կայ նաեւ Աղասիի հետաքրքրաշարժ գրութիւնը՝ ղեկավարի հանգամանքով՝ թէ որո՞նք միացան հնչակեան շարժումին, գիւղերը ի՞նչ պայմաններու մէջ էին, Կիպրոսէն կու գան գործիչներ՝ իրենց հետ բերելով ռազմամթերք, ո՞ր ընկերները ի՞նչ պաշտօններ ունէին, սոսմանեան իշխանութիւնները ինչպիսի՞ միջոցառումներ կ'որդեգրէին տեղաբնակներուն հանդէպ, հայ յարանաւանութիւնները ինչպիսի՞ իրավիճակ կը պարզէին եւ այլն: Ան Սուեւիայէն հրաժեշտ առնելով, զինակից Ապահի հետ Չեյթուն ուղղուելէ առաջ, Սուեւիոյ մէջ քարոզած քրիստոնեայ առաքելութիւնը թուելէ ետք, կը գրէ՝ «Ու ես Հնչակեան Առաքեալ մը, հայ մը որչա՞փ սիրեցի զձեզ... մտքիս լաւագոյն բաժինը տուի. մնա՞ք բարեա...»: Սակայն, շատ կարեւոր նիւթ մը կայ ուսումնասիրելի հայ պատմագրութեան համար եւ յատկապէս Հնչակեան կուսակցութեան պատմութեան համար: Ան կը խօսի այդ շրջանը բնակող ֆէլլախներու կամ թաթերու մասին (կը նշէ նաեւ՝ սարդկ-կեցիներ), անոնք մասին գրելով՝ «հայերէն աւելի թուրքէն մտրուած զեղ մը: Կամաց կամաց իրենք եւս Նշմարեցին հայ գիւղերուն կրած բարեփոխութիւնները եւ սկսան հետաքրքրուիլ եւ մերձեցալ մեզի: Իրենցմէ ուրք հոգի, մէկիկ մէկիկ եկան եւ ուխտագրուեցան Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան»: Ան կը նշէ թէ իսլամը չէին եւ քրիստոնեաներու մօտ կը համարուէին: Թուրքերու դէմ ատելութիւնը եւ իրենց ճնշեալ կացութիւնը մղած են զինակից համարել հայութիւնը եւ մասնատարաբար անոր կազմակերպեալ ուժը՝ Հնչակեան կուսակցութիւնը: Իր տուեալները կը յուշեն թէ անոնք մերօրեայ այեւիներն են:

Փաստօրէն, հայ-աւելի զինակցութեան պատմութիւն մը առկայ է հետազօտութեան արժանի: Այս նիւթը կրնայ նոր ծալքեր բանալ Հնչակեան կուսակցութեան փառաշէտ, մարտական եւ ընկերակարական պատմութեան մէջ: Մեր պատմութեան լայնօրէն չլուսաբանուած այս հատուածը կրնայ հպարտառիթ ազգայն դառնալ հնչակեան յետնորդներուն, որովհետեւ կ'ապացուցէ, որ հնչակեաններ նաեւ կը հետամտէին համամարդկային իտելիներ՝ ազգային կողքին: Այս առումով, առաւել կը կոթողուի Աղասիի հերոսական, ընկերակարական եւ զաղափարական տիպարը՝ առաւել գեղազարդելով հնչակեան հերոսներուն աստղաբոյլը: Բայց... միթէ՞ հերոսներն Աղասի արժանի չէ իր անուով փողոց մը ունենալու Երեւանի Չեյթուն թաղամասին մէջ... Ապրիլը, ընկերներ, որ գէթ Պէյրուսի մէջ կենդանացուցիք յիշատակը Կարապետ Թուր-Սարգիսեանին՝ Աղասիին:

# ԹՈՒԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՆՉ ԿԸ ԴԻՏԵՆ ՄԵՐ ԵՐԵՆԱՆԵՐԸ

## ԼԵՆԱ ՊՕՂՈՍԵԱՆ

Խոհանոցէն մայր մը բարձրաձայն կը բարկանայ իր գաւակներուն վրայ՝ ներուած անոնց ուշ տուն վերադառնալուն պատճառով: Ինչպէս շատ մայրեր, ան կը կարծէ, թէ տունէն դուրս մեծ է վտանգը եւ որքան ուշ՝ այսինքն գիշերուան ժամերուն մօտ ըլլալ տուն դարձի ժամը, այդքան վտանգը կը բազմապատուի: Այսպէս շատ մը ծնողներու ձայնը կը լսուի, երբ անոնք յաճախ կը բարկանան՝ ըսելով. «Հոս տո՞ն է, թէ՞ օթել», կամ «Եթէ ուշ վերադառնաս՝ դուռը պիտի կղպեմ», ուրիշ տարբերակ մըն ալ կայ որ կ'ըսէ. «Նորէն ո՞ր կ'երթաս, տունը չմտտիս հա»: Անոնք կը հաւատան, որ քանի դեռ իրենց գաւակները տունն են՝ հանգիստ նստած թապլեթին առջեւ կամ հեռատեսիլին դիմաց կամ բջջայինը իրենց ձեռքին, ապահով ու պաշտպանուած են եւ կը գտնուին ծնողին հսկողութեան տակ: Այս երեւոյթը շատ բնական էր ժամանակին, սակայն ներկայ ժամանակներուն մէջ, ուր արհեստագիտութիւնը եւ համացանցը արագ յառաջացումի եւ փոփոխութեան մէջ է, այս ներկայ իրողութիւնը բոլորին կը յեղաշրջէ:

Արդարեւ, մանկական զարգացումի եւ լրատուամիջոցներու ուսումնասիրութեան արդի հետազօտութիւնները այս համոզումը կը վիճարկեն:



Թուային դարաշրջանին մէջ «անվտանգութիւն» հասկացողութիւնը այլեւս չի սահմանափակուի միայն ֆիզիքական տարածքով: Պատկերասփռումները վերածուած են սակայն հասարակականացումի միջոցներու, որոնք շատ կանուխ տարիքէն սկսեալ կրնան ձեւաւորել երեխաներու մտածողութիւնը, համոզումները եւ ինքնութեան կազմաւորումը:

Այն, ինչ որ այսօր մեր երեխաները կը դիտեն, այլեւս պարզ ժամանց չէ: Անկախ կազմակերպուած պատմութիւններու եւ պատահարներու շարք մըն է, որ անմիջական ազդեցութիւն ունի երեխային ճանաչողական, զգացական եւ ընկերային զարգացումին վրայ:

Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ կատարուած բազմաթիւ հետազօտութիւններ ցոյց կու տան, թէ հեռատեսիլներէ հաղորդուած մանուկներու յատուկ յայտագրերը ազդեցիկ դեր կը խաղան ինքնութեան ձեւաւորումի գործընթացին մէջ: «Journal of Student Research»-ին մէջ հրատարակուած ուսումնասիրութիւնը մը կը փաստէ, որ մանկութեան առաջին շրջանին հեռատեսիլէն հրամցուած ու փոխանցուած բովանդակութեան ազդեցութիւնը կրնայ շատ մեծ ազդեցութիւն ունենալ երեխաներու ինքնութեան վրայ՝ ներառեալ սեռային եւ սեռական ինքնութեան ըմբռնումը ինքնագիտակցութեան եւ ընկերային զարգացումի տարբեր փուլերու մէջ:

Միաժամանակ, վերջին տարիներու բովանդակային վերլուծութիւնները կը փաստեն, որ մանկական հաղորդումներու բնոյթը զգալի փոփոխութիւններ կրած է: 2025 թուականին Ամերիկայի մէջ հրատարակուած ուսումնասիրութիւնը մը, որ քննած է Netflix-ի 326 մանկական հաղորդումներ, եզրակացուցած է, որ փոքր տարիքներու համար նախատեսուած (TV-G) այսինքն բոլոր տարիքներու յարմար, եւ TV-Y7՝ այսինքն եթէ տարեկանէ վեր եղողներու համար) յայտագրերուն շուրջ 41 տոկոսը կը պարունակէ թեմաներ, որոնք կը վերաբերին սեռային ինքնութեան, նոյն սեռի անձերու յարաբերութիւններուն կամ ոչ-աւանդական ընտանիքներու պատկերացումին:

Այս թեմաները այլեւս սահմանափակուած չեն պատանիներու համար պատրաստուած բովանդակութեամբ: Անոնք աւելի ու աւելի յաճախ կը ներառուին նաեւ մանուկներու եւ տարրական դպրոցականներու համար ստեղծուած մուլտֆիլմերուն (cartoons) մէջ:

- Այս ուղղութեամբ լայնատարած օրինակներ են՝
  - The Legend of Korra
  - Steven Universe
  - The Loud House
  - The Owl House
  - She-Ra and the Princesses of Power
  - Berry in the Big City
  - Power Rangers (վերջին տարբերակները)
  - Dead End: Paranormal Park

Այս հաղորդումները, որոնք հասանելի են ամբողջ աշխարհին Netflix-ի կամ YouTube-ի ման հարթակներու միջոցով, յաճախ կը ներկայացնեն պատմութիւններ, ուր տեղ կը գտնեն նոյն սեռի ծնողներ, նոյն սեռի կերպարներու միջեւ սիրային կապեր կամ ինքնութեան վերաբերող գաղափարներ, որոնք ներմուծուած են պատմութեան ընթացքին մէջ:

Հարունակութիւնը տեսնել էջ 4

# ԵՒՐՈՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ Է ՀԵՌԱԿԱՌԱՎԱՐՈՒՈՂ ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Եւրոմիութեան աջակցութեամբ Հայաստան ներկրուած է հեռակառավարվող ականազերծման յատուկ երկու մեքենայ, որոնք պիտի կիրառուին երկրի վտանգաւոր վայրերուն մէջ մարդասիրական ականազերծման աշխատանքներու համար:



Երուսաղէմի արտադրութեան այս տեխնիկական նախատեսուած է բոլոր տիպի ականներու համար եւ ունակ է դիմանալու հզօր պայթումներու:

Պաշտօնական գնահատմամբ՝ Հայաստանի հինգ մարզերու մէջ՝ Տաւուշի, Սիւնիքի, Վայոց ձորի, Արարատի եւ Գեղարքունիքի մէջ, առկայ է շուրջ 43 միլիոն քառակուսի մետր «աղտոտուած տարածք», այսինքն՝ վտանգաւոր հատուածներ: Անոնք հիմնականին մէջ գիւղատնտեսական հողեր, արօտավայրեր ու ենթակառուցուածքներ են: Ըստ կառավարութեան՝ նոր սարքաւորումներուն կիրառումը պիտի նպաստէ վտանգներու եւական նուազեցման եւ տարածքներու ընկերա-տնտեսական զարգացման:

Այս յատկացումը կ'իրականացուի 2025 թուականի Դեկտեմբերին Հայաստանի եւ Եւրոմիութեան միջեւ ստորագրուած երկկողմ գործընկերութեան օրակարգի փաստաթուղթի շրջանակին մէջ, որով նախատեսուած է 15 միլիոն եւրօ յատկացնել խաղաղութեան պահպանման ու աւելի դիմացկուն Հայաստանի համար: Բացի ականազերծման մեքենաներէն, Հայաստանը շուտով պիտի ստանայ նաեւ անհրաժեշտ յազեցուածութեամբ շտապօգնութեան երկու մեքենայ:

Հեռակառավարվող մեքենաները գործի պիտի դրուին 2027-էն եւ պիտի օգտագործուին նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրապէյճանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանազատման աշխատանքներուն մէջ:

# ԿԻՆ ԵՒ ԳԱՀ

## Պատմական դիմանկարներ

«Թագաւորական ծիրանին անէնէն ազնիւ պատանքն է»:  
Որքան ճիշդ է այս հին ասացուածքը:  
**Կայսրուհի Թետորա**

Մարդկութեան պատմութեան հիմնական նկարագրութիւնը յաճախ կ'անտեսէ կիններուն ներդրումը, սակայն անարդար պիտի ըլլար չարձանագրել, որ շատ անգամ անոնք եղած են այն ուժը, որ փոխած են պետութիւններու ճակատագիրը:

Այս ակնարկին մէջ կը փորձենք լոյս սփռել պատմութեան ընթացքը վերաիմաստաւորած կիններէն մէկ քանին վրայ...

### Յաջնութիւնը. կին, ով դարձաւ փարաւոն



Մեր ճամբորդութիւնը դէպի պատմութեան խորքերը կը սկսի Բ.Ա. ԺԵ դարուն՝ Նեղոսի Գիստի Գիստի: Զին Եգիպտոսի հազարամեայ պատմութեան մէջ, ուր գահը բացառապէս այրմարդոց մենաշնորհն էր, յայտնուեցաւ կին մը, որ ոչ միայն ստանձնեց երկրին ղեկը, այլեւ պաշտօնապէս ինքզինքը հռչակեց փարաւոն՝ կրելով արքայական բոլոր խորհրդանշանները, ներառեալ՝ արհեստական մորուքը...:

Անոր անունը թարգմանաբար կը նշանակէ «առաջինը ազնուական կիններուն մէջ»:

Յաջնութիւնը: Թութոս Ա-ի դուստրը:  
Քանի որ փարաւոնի գահը անսկզբաբար ընդունուած էր, որ գրաւէն այրմարդիկ (որպէս Զորուս սատուծոյ երկրային մարմնաւորում), Յաջնութիւնը պաշտօնական արձանագրութիւններու եւ պատկերներու մէջ ինքզինքը ներկայացուցած է այրմարդու տեսքով... Զորուս Զին Եգիպտոսի գլխաւոր սատուածութիւններէն էր՝ Օսիրիսի եւ Իսիսի որդին, երկնքի, թագաւորութեան եւ պատերազմի սատուածը:

Եգիպտացիները կը հաւատային, որ իշխող փարաւոնը սատուածային կառավարումի եւ պաշտպանութեան ամենէն եակայն դէմն է:

Յաջնութիւնը Գիստի Գիստի 20-ամեայ ղեկավարումը նշանաւորուեցաւ Զին Եգիպտոսի տնտեսութեան, արուեստի եւ արտաքին քաղաքականութեան ամբողջական վերածնունդով: Ան կրցաւ ապահովել երկրին խաղաղութիւնն ու տնտեսական բարգաւաճումը, վերականգնել ամեւորակայն խզուած կապերը, հինգ նաւերէ բաղկացած ծովային ամեւորակայն արշաւախումբ կազմակերպել դէպի Փունիք երկիր՝ Զարաւային Ափրիկէ (որուն ճշգրիտ տեղագրութիւնը մինչ օրս կը մնայ պատմագիտական բանավէճերու առարկայ), ուրկէ Եգիպտոս բերին ոսկի, փղոսկր, անուշաբոյրեր, կենդանիներ եւ ծառատեսակներ:

Ժամանակակից հնագիտութիւնը պայցուցած է, որ ան երբեմն անձամբ, երբեմն զօրավարներու միջոցաւ ռազմական արդիւնաւետ արշաւներ ղեկավարած է դէպի Նուպիա՝ Սուտան, եւ Լեւանթ՝ Պաղեստին/Սուրիա, որպէսզի պաշտպանէ եւ պահպանէ Եգիպտոսի սահմաններն ու ազդեցութիւնը:

Յաջնութիւնը կը յիշուի որպէս Եգիպտոսի պատմութեան ամենամեծ շինարարներէն մին:

Անոր հրամանով կառուցուած են հսկայական քարակոթողներ՝ obelisk-ներ: Նեղոսի Գիստի, Լուքսոր քաղաքի Տէյր ըլ-Պահարիի գահավեր ժայռերուն մէջ փորուած ճարտարապետական հրաշք մը կայ, որ կը գաղտնորոշուի անապատէն վեր խոյացող երեք հսկայ սիւնաշարերով, որուն պատերը զարդարուած են ապշեցնող, մինչ օրս պահպանուած արուեստի գործերով եւ որոնք կը պատկերեն Յաջնութիւնի սատուածային ծնունդը, ինչպէս նաեւ ամեւորակայն արշաւանքը դէպի Փունիք:

Յաջնութիւնը յաջողեցաւ իր շուրջ հաւաքել հաւատարիմ եւ տաղանդաւոր մարդիկ, որոնց ամենէն ազդեցիկը եղաւ Սեննեմութը՝ արքունի ճարտարապետը, եւ թագուհին ղստեր դաստիարակը:

Կառավարումի այս ձեւը թոյլ տուաւ կայունացնել եւ հարստացնել երկիրը:

Յաջնութիւնի մահէն ետք, յաջորդ փարաւոնը՝ Թութոս Գ, ոչնչացուց անոր արձանները, հանեց արքայացուցակներէն անունը, փորձելով պատմութենէն ի սպառ ջնջել անոր հետքը, սակայն ԺԹ դարու հնագետներուն ուսումնասիրութիւնները վերականգնեցին անոր անունն ու արժանի տեղը պատմութեան մէջ:

Զին Եգիպտոսի մէջ Յաջնութիւնը պայցուցեց, որ կնոջ խելքն ու կամքը ի գօրու են բարգաւաճում բերել պետութեան:

\*\*\*



Զարհուրեցնական ետք, արդէն 2. դարուն, պատմութեան թատերաբեմ բարձրացաւ ուրիշ կին մը, որ նոյնպէս աղքատութենէն հասաւ բարձունքներու, բայց այս անգամ՝ Բիզանդական կայսրութեան սրտին մէջ:

Եթէ Եգիպտոսը ունեցաւ փարաւոն-թագուհի, ապա Կոստանդնուպոլիսը պիտի ճանչնար իր ամենէն ազդեցիկ կայսրուհին՝ Թետորան, կին մը, որ կտրեց իր ժամանակի բոլոր կարծրատիպերն ու օրէնքները՝ սովորական դերասանուհիէն դառնալով կայսրութեան առանցքային դէմքերէն մէկը: Անոր անունն էր՝ **Թետորա**:

Ան եղաւ Յուստինիանոս Ա. կայսեր կինն ու հաւասարագոր իշխանակիցը:  
Գահ չբարձրացած, Թետորա յայտնի էր իր անկախ անհատականութեամբ. դերասանուհի էր եւ պարուհի:  
Յուստինիանոսի հետ ամուսնանալով ան դարձաւ կայս-

րուհի եւ մեծապէս նպաստեց կայսրութեան զարգացման:  
Թետորայի եւ Յուստինիանոսի սիրոյ պատմութիւնը եղաւ արտասովոր եւ զօրեղ այն միութիւններէն, որ յաղթահարեց ժամանակի ընկերային եւ իրաւական բոլոր արգելքները: Յուստինիանոս կայսերական գահի ժառանգորդն էր, բարձրաշխարհիկ հասարակութեան ներկայացուցիչ, մինչ Թետորա, ինչպէս կարելի է գուշակել, աղքատ ընտանիքէ, այդ օրերու Բիզանդիոյ համար անարգուած մասնագիտութեան տէր: Զակառակ այս տարբերութեան, Յուստինիանոս խորապէս սիրեց Թետորան՝ անոր անասելի գեղեցկութեան, խելքին եւ ամուր նկարագրին համար:

Այդ ժամանակաշրջանի օրէնքները պատրիկներուն (ազնուականներ) կ'արգիլէին ամուսնանալ ստորին խաւի կնոջ կամ դերասանուհիի հետ: Յուստինիանոս այնքան վճռական էր իր որոշման մէջ, որ հօրեղբօր՝ Յուստինոս Ա. կայսեր ստիպեց փոխել օրէնքը: Նոր օրէնքով՝ թատրոնէն հեռացած կնոջ մը իրաւունք տրուեցաւ ամուսնանալ որեւէ կարգավիճակ ունեցող այրմարդու հետ:

Սակայն այս փոփոխութեան կտրակնապէս դէմ էր Յուստինիանոսի հօրաքոյրը՝ Էուֆեմիա կայսրուհին, հետեւաբար պաշտօնական ամուսնութիւնը տեղի ունեցաւ միայն անոր մահէն ետք՝ շուրջ 524 թուականին:

527-ին, երբ Յուստինիանոս բազմեցաւ գահին, ան Թետորան ներկայացուց որպէս կառավարչակից (Augusta): Անոնք երկիրը ղեկավարեցին որպէս հաւասար գործընկերներ: Կայսրը որոշումներ չէր կայացներ առանց կնոջ հետ խորհրդակցելու, իսկ պաշտօնէսներ հաւատարմութեան երդում կու տային երկուքին:

Թէեւ Թետորա չկրցաւ գահաժառանգ պարգեւել կայսրութեան (անոնց միակ գաւազը մահացաւ վաղ տարիքին), Յուստինիանոս երբեւէ չմտածեց ամուսնալուծութեան կամ այլ կնոջ մասին:

Բիզանդիոյ համար 532 թուականը եղաւ ծանր ճգնաժամի տարի: Ապստամբները կը սպառնային տապալել Յուստինիանոսը, բայց Թետորայի վճռական լոյսը փոխեց ամեն բան: Անոր պնդումով, կայսրը չխախտաւ մայրաքաղաքէն եւ յաջողեցաւ ճնշել խռովութիւնը, այդպիսով փրկելով գահը:

Թետորա մեծապէս բարեխալեց կիններուն ընկերային դիրքը. ա) Օրէնքներ ընդունուեցան, որոնք ամուսնալուծութեան ընթացքին կը պաշտպանէին կինները:

բ) Արգիլուեցաւ հարկադիր մարմնավաճառութիւնը եւ գոցուեցան հասարակաց տունները:

գ) Նախկին մարմնավաճառներուն համար ստեղծուեցան ապաստարաններ:

Թետորայի մահը խոր վիշտի մատնեց Յուստինիանոս կայսրը, որ այլեւս չամուսնացաւ ու կնոջ յիշատակը պահպանեց իր կենքի մնացեալ տասնեւեօթը տարիներու ընթացքին:

Թետորա ապացուցեց, որ նոյնիսկ ամենաստորին խաւէն կարելի է հասնիլ բարձունքներու եւ դառնալ պետութեան փրկիչ:

\*\*\*

Սակայն Բիզանդիան միակ տեղը չէր, ուր կիներ ուղղութիւն տուին պատմութեան ընթացքին:  
Ճանօթանալք մեր յաջորդ հերոսուհիին...

**Թմիրիս. Տափաստաններու անկախ թագուհին**, առաջին կին ղեկավարներէն, որ յաղթեց այդ ժամանակներու աշխարհի ամենահզօր տիրակալներէն մէկուն:

Եթէ Բիզանդիոյ կայսրուհի Թետորա իր սուր միտքով ու դիւանագիտութեամբ պալատական պատերէն ներս վերաշարարդեց պետութեան ճակատագիրը, ապա պատմութեան անիւք մեզ կը տանի ետ՝ Բ.Ա. 2. դար: Այստեղ՝ Կեդրոնական Ասիոյ ընդարձակ տափաստաններուն մէջ, մեք կը հանդիպինք թագուհիի մը, ով ձեռքը առաւ սուրը ու պատմութեան մէջ մտաւ որպէս աշխարհի ամենանկախ ռազմիկներէն մէկ:

Այդ թագուհին պատմութեան մէջ մնաց Թմիրիս անունով: Ըստ հնագոյն ամենադիտարկներու, Թմիրիս Կեդրոնական Ասիոյ տափաստաններուն մէջ ապրող բրգնացիկ մագդութներու (սկիփական ցեղ, որուն զինուորները կը կրէին բարձր, սրածայր, բրգածեմ սաղաւարտներ) անկախ թագուհին էր: Ան երկրին ղեկավարումը ստանձնեց ամուսնոյն՝ Նախկին արքայի մահէն ետք:

Թմիրիս առաւելաբար յայտնի է Պարսից տիրակալ Կիրոս Մեծի դէմ մղած իր արհմարտի պատերազմով: Այդ մասին արժեքաւոր տեղեկութիւններ փոխանցած է յոյն պատմահայր Զերոտոսը:

Նուաճողական նկրտումներ որոճացող Կիրոս հրապարուած էր մագդութներու հարուստ տարածքներով եւ Բաբելոնը գրաւելէ ետք դիմեց խորամանկ քայլի: Ան ամուսնութեան առաջարկ ներկայացուց Թմիրիսին, այդպէս յուսալով դիւրութեամբ տիրանալ անոր երկրին: Սակայն թագուհին մերժեց առաջարկը՝ գիտակցելով, որ Կիրոսին կը հետաքրքրէր ոչ թէ ինք, այլ իր թագաւորութիւնը:

Մերժումէն կատարած, Կիրոս հրամայեց կամուրջներ կառուցել Արաքս (Եաքսարտ) գետի վրայ եւ անցաւ բացայայտ ռազմական ներխուժումի:

Թմիրիս յորդորեց դադրեցնել յառաջխաղացումը եւ բաւարարուիլ սեփական թագաւորութեամբ, սակայն Կիրոս, անսպալով Լիտիոյ հարուստ արքայ Կրեսոսի խորհուրդին, որոշեց շարունակել պատերազմը:

Պատերազմին սկիզբը պարսիկները խորամանկութեամբ, ռզելից խմիչքի միջոցով թակարդեցին եւ գերի տարին Թմիրիսի որդին՝ Սփարքափիսը: Վերջինս, գերութենէն ազատելուն պէս, չհանդուրժելով կրած խայտառակութիւնը, անձնասպան եղաւ:  
Չակնին վրէժը լուծելու համար, Թմիրիս իր ամբողջ բանակով կատարի յարձակման անցաւ, ջարխալից պարսից զօրաբանակները, իսկ Կիրոս Մեծ թե՛ մարտի ընթացքին սպաննուեցաւ:



### ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (Երեւան)

Ըստ ամենադիտարկի, թագուհին հրամայեց գտնել Կիրոսի մարմինը, կտրել գլուխը եւ ընկղմել արհմարտի լեցուն տիկի մը մէջ, հեզնանքով նետելով՝ «Արհմարտ կը սնանկիր, յազեցիր արհմարտը»:

Այդ օրէն ի վեր Թմիրիսի անունը դարձաւ ազատութեան, անկախութեան եւ աննկուն կամքի խորհրդանշան: Անոր կերպարը դարձրեց շարունակ ներշնչած է պատմաբաններ, գրողներ ու նկարիչներ, որոնց շարքին նաեւ Ռուպինա, որ իր նշանաւոր կտաւով անմահացուց այդ յաղթանակը:

### Չենուպիա՝ Փալմիրիի հզօր թագուհին

Ճիշդ է, որ մագդութներու անկախ թագուհին ռազմի դաշտին մէջ կասեցուց պարսիկները, սակայն պատմութեան մէջ կայ կին մը, որ տարապայման դողի մատնած է ուրիշ աշխարհակալ կայսրութիւն մը:

Տեղափոխուինք Գ. դար, Սուրիոյ անապատի սրտին մէջ տեղակայուած հզօր Փալմիր: Այստեղ պիտի գտնենք հնագոյն աշխարհի ամենէն ուսեալ, խելացի ու յաւակնուտ կիններէն մէկը, որ ծունկի բերաւ Զոմիր արեւելեան գաւառները: Չենուպիան է ան:

Ճաշ ըլլալով շուրջ 240 թուականին, Չենուպիա ստացած էր արտակարգ կրթութիւն՝ կատարելապէս տիրապետելով արամեերէնին, եգիպտերէնին, յունարեւին եւ լատիներէնին: Ան Փալմիրի կառավարիչ Օտենաթոսի կողակիցն էր: Պատմութիւնը տարբեր վարկածներ կը յիշատակէ անոր ամուսնոյն եւ աւագ զակին սպանութեան մասին, որոնցմէ ամենէն տրամաբանականը կը պատմէ, թէ ազգականներէն՝ Մենուսիս, առիթով որսի ատեն միտումնաւոր վեճ կը բռնկեցնէ եւ կը սպաննէ երկուքը՝ գահին տիրանալու ակնյայտ նպատակով: Սակայն Մենուսիս յաւակնութիւնները ի դերէ ելան:

Փալմիրի բնակչութիւնն ու բանակը հաւատարիմ էին Օտենաթոսին, որ զիրենք փրկած էր պարսկական սպառնալիքէն: Չունենալով բաւարար հեղինակութիւն եւ լայն աջակցութիւն, Մենուսիս «կառավարումը» տեւեց ընդամենը մէկ քանի օր: Չենուպիայի կողմակիցները, զօրքն ու գայրացած ամբոխը շուտով տապալեցին գայն: Մենուսիս ձեռք բախուեցաւ եւ դատապարտուեցաւ մահապատիժի: Այսպիսով, անձնական ողբերգութենէ վերջ Չենուպիայի համար ճամբայ բացուեցաւ դէպի միանձնեայ իշխանութիւն:

267 կամ 268 թուականին ան դարձաւ իր անչափահաս զակին ինամակալը եւ ստանձնեց երկրին փաստացի ղեկավարումը: Օգտուելով Զոմմեական կայսրութեան ներքին խռնաշփոթէն ու ճգնաժամէն՝ Չենուպիա անցաւ վճռական քայլերու: Ան գրաւեց Եգիպտոսը եւ իր տիրապետութիւնը տարածեց Փոքր Ասիոյ եւ Արեւելքի մեծ մասին վրայ: Սակայն 272 թուականին Զոմիրի հզօր կայսր Լուցիուս Դոմիցիուս Աուրելիանոս մեծ արշաւանք ձեռնարկեց դէպի Արեւելք: Ան պարտութեան մատնեց Չենուպիայի զօրքերը, գրաւեց «անապատի հարսնացու» Փալմիրը եւ թագուհին գերեզմարելով տարաւ Զոմմ:

Թէեւ անոր կենքի հետագայ ընթացքի մասին վարկածները տարաբնոյթ են, եւ պատմաբանները կը նախընտրեն չծաւալիլ, մէկ փաստ, սակայն, անհերքելի է: Չենուպիան պատմութեան մէջ մնաց որպէս հին աշխարհի ամենախելացի, տաղանդաւոր ու հզօր կիններէն մէկը:

### Փառանձեմ. Զայոց անկողնոյն Տիկնանց Տիկնից

Զեռաւոր Փալմիրի թագուհին մարտահրաւեր նետեց Զոմմին, սակայն նոյն՝ Գ. դարուն, Զոմմեական եւ Սասանեան հզօր կայսրութիւններու երկխօսութեան արհմարտի խաչմերուկին վրայ կանգնած էր ուրիշ պետութիւն մը, ուր ծնունդ առաւ կերպար մը, որուն անունը յաւերժ կը մնայ հայոց պատմութեան ոսկէ, բայց հառաչանքով լեցուն էջերուն մէջ:

Մեծ Զայոցի Տիկնանց Տիկնիցն էր ան, Արշակ Բ. արքայի կինը եւ Պապ թագաւորի մայրը՝ Փառանձեմ թագուհին, որ դարձաւ հայկական պետականութեան աննկուն պաշտպանութեան խորհրդանշանը:



Փառանձեմ պատմութեան յայտնի է որպէս անընկճելի հայրենասէր, որ պարսկական արշաւանքներու ընթացքին գլխաւորեց Արտագերս ամրոցի հերոսական պաշտպանութիւնը եւ զոհուեցաւ յանուն հայկական պետականութեան: Սինեաց Անդովկ նախարարի գեղեցկուհի դուստրը նախ ամուսնացած էր Արշակ Բ. թագաւորի եղբորորդի՝ Գնելիին հետ: Սակայն, ինչպէս յաճախ կը պատահի գեղեցիկ կիներու պարագային, անով հրապարուած էր նաեւ Գնելի հօրեղբորորդի Տիրիթ: Խառնուել ու նախանձեմ կողոցած, Տիրիթ զոհարտեց Գնելը, ինչին անսպալով՝ Արշակ թագաւոր սպաննել տուաւ իր եղբորորդին եւ շատ չանցած բռնութեամբ ամուսնացաւ Փառանձեմին հետ: Թագուհին ներքնապէս չնրեց իր նոր ամուսինը՝ սիրելի կողակիցին անարդար մահուան համար:

Ժամանակի ընթացքին, սակայն, Փառանձեմ դարձաւ արքունիքի հզօր ու ազդեցիկ քաղաքական դէմք: Ամուսնութենէ վերջ ծնաւ Պապը (պատմական հանելուկ մը եւս՝ Գնելի, թէ՛ Արշակի որդին է ան), որ դարձաւ Արշակունեաց գահի օրինական ժառանգը: Իր զակին գահը ապահովելու եւ արքունիքին մէջ իր դիրքերը ամրապնդելու համար, Փառանձեմ կազմակերպեց Արշակի առաջին կնոջ՝ հռոմեացի Օլիմպիայի սպանութիւնը:

Շատ չանցած Զայաստանի վիճակը ծայրահեղ ծանրացաւ: 363 թուականի «Ամօթալի դաշնագրէն» ետք Զոմմը լքեց հայերը, որով եւ ազատ արձակուեցան Շապուհ Բ.-ի

# ԹՈՒՎՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒ ՄԱՆԿԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ...

Շարունակում է 2-էն

Կրթական տեսանկյունից՝ հիմնական մտահոգությունը ոչ թե միայն այս թեմաներում առկայությունն է, այլ այն, թե արդե՞ք երեխան զարգացման այնպիսի փուլի մեջ է, որ կարենալ գանոնը ճիշդ հասկնալու և մեկնաբանելու:

Չարգացումի հոգեբանությունը կը փաստե, որ փոքր տարիքի երեխաները տակալին հասած չեն ըլլար այն ճանաչողական հասունութեան, որ կարենան ընկալել անհրաժեշտ վերացական գաղափարները քննական մտածողութեամբ: Անոնք ընդհանրապէս տեղեկութիւնը կը ստանան բառացի կերպով եւ ընթրինակելով: Հետեւաբար, եթէ այսպիսի բովանդակութիւն պարունակող շարժապատկերներ կրկնուին առանց ծնողական ուղեկցութեան, փոքրիկը կրնայ գայն ներքնացնել՝ առանց իսկական ըմբռնումի:

Լրատումափոխանակումը ազդեցութեան վերաբերող ուսումնասիրութիւնները հետեւողականօրէն կը փաստեն, որ հեռատեսիլը հասարակական ուսուցումի ազդու գործոն մըն է: Ան կը ձեւաւորէ երեխաներու պատկերացումները, թէ ի՞նչն է բնականը, ընդունելին կամ ցանկալին: Սեռային ներկայացումներու վերաբերելով հետազոտութիւններն ալ կը հաստատեն, որ որոշ պատմութիւններու շարունակական ազդեցութիւնը կրնայ զգալիօրէն ձեւաւորել երեխաներու պատկերացումները սեռային դերերու եւ ինքնութեան վերաբերելով: Հետեւաբար, հիմնական վտանգը անմիջական վարքագծային փոփոխութիւնը չէ, այլ՝ աստիճանաբար մտածողութեան ձեւաւորումը:

Երբ երեխան առանձին կը փորձէ հասկնալ բարդ ընկերային հարցեր կամ բովանդակութիւններ, նմանօրինակ երեւոյթները կրնան յառաջանալ՝

Տարիքին ոչ-համապատասխան ինքնութեան հարցերու շուրջ շփոթութիւն:

Ներքին հարցադրումներ՝ առանց համապատասխան բացատրութեան կամ առաջնորդութեան:

Միտքերը եւ հարցումները ծնողներուն հետ չկիսելու հակում:

Յառաջիկայ տարիներուն ծնող-զաւակ յարաբերութեան մէջ զգացական հեռացում կամ գաղտնապահութիւն:

Այս մտահոգութիւնները ենթադրութիւններ չեն: Անոնք համահունչ են մանկական հոգեբանութեան մէջ առկայ այն լայնածաւալ ուսումնասիրութիւններուն, որոնք կը քննարկեն առանց վերահսկողութեան լրատումափոխանակումը ենթարկուած երկարամիտ ազդեցութիւնները:

Կարեւոր է նաեւ ընդգծել, որ խնդիրը պարզապէս որոշ բովանդակութիւն արգիլելը կամ մերժելը չէ միայն: Իրական հարցը ծնողներու ներգրուածութիւնը եւ կրթական պատասխանատուութիւնն է:

Այսօրուան ծնողները պէտք է անցնին սովորական վերահսկողութենէն, գիտակից մասնակցութեան՝

Դիտել հաղորդումները իրենց երեխաներուն հետ:

Քննարկել դիտուած թեմաները՝ երեխային տարիքին համապատասխան լեզուով:

Ներկայացնել ընտանիքին բարոյական, մշակութային եւ արժեքներու հիմքերը:

Խրախուսել ազատ ու վստահելի երկխօսութիւն՝ առանց վախի կամ դատապարտելու ոճով:

«Երեխաս ապահով է, որովհետեւ տունն է»։ այս պատկերացումը այսօր կարիքը ունի լուրջ վերաբերմանով:

Ժամանակակից տունը, իր միացած սարքերով եւ անասիման թուային հասանելիութեամբ, վերածուած է բաց ու լայն դարպասի, ուրկէ երեխան կը կապուի աշխարհի տարբեր գաղափարախօսութիւններուն, արժեքներուն եւ մշակութայիններուն:

Որպէս ծնողներ եւ դաստիարակներ՝ մեր առաքելութիւնը երեխաները աշխարհէն մեկուսացնել չէ, այլ անոնց օգնել, որ գիտակցաբար հասկնան եւ մեկնաբանեն այն՝ ինչ կը տեսնեն. անշուշտ իրենց տարիքը միշտ նկատի ունենալով: Նկատի առնելով, որ երեխային զարգացումին վրայ ամենախոր ազդեցութիւնը ոչ թէ միայն այն է՝ ինչ կը դիտէ, այլ այն՝ որ զինք առաջնորդող ու հետեւող կայ դիտելու ընթացքին:

# ՈՒՂԵՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՏՈԿՈՍԸ

ՏՈՐԵՆ ՓԻՒԼԻՃԵԱՆ (Հալէպ)

Նեարդաբանական, կենսաբանական եւ հոգեբանական վերլուծմամբ՝ մարդ արարածը իր ուղեղը կ'օգտագործէ 100 առ 100: Այն տարածուած կարծիքը, թէ մենք կը գործածենք ուղեղին միայն մէկ փոքր տոկոսը, գիտական ոչ մէկ հիմք ունի: Իրականութեան մէջ, ուղեղի տարբեր բաժիններ ունին տարբեր գործառնություններ. մէկ մասը պատասխանատու է գիտակցական մտածողութեան եւ տրամաբանութեան համար, իսկ մնացածը հսկայական մասը անդադար կ'աշխատի ենթագիտակցութեան մէջ՝ կազմակերպելով եւ կարգաւորելով մարմնի բոլոր հիւսուածքներն ու կենսական համակարգերը:

Ուղեղին միայն 10%-ը օգտագործելու գաղափարը զուտ շուկայական եւ գրաւիչ տեսակետ մըն է, որ ժամանակի ընթացքին տպաւորուած է հանրութեան գիտակցութեան մէջ եւ վերածուած «օրէնքի»:



Այս թիրիմացութիւնը յաճախ սխալմամբ կ'ապուծէ եւ Այնշայի անուան հետ, սակայն փաստացի ոչ մէկ աղբիւր կայ, որ ան նման բան ըսած ըլլայ: Անոր խօսքերը պարզապէս բառացի մեկնաբանուած է, մինչդեռ ան այլաբանական է:

Յերիւրանքի իրական արմատները կը հասնին 19-րդ դարու հոգեբան Ուիլիլմ Էյնսթին: Ան նշած էր, որ մարդիկ կ'օգտագործեն իրենց մտաւոր եւ մարմնային պաշարներու միայն մէկ մասը՝ նկատի ունենալով ներուժը: 20-րդ դարուն այս միտքը ձեւափոխուեցաւ եւ ստացաւ հետեւեալ սխալ ձեւակերպումը՝ «Մարդը կ'օգտագործէ իր ուղեղին միայն 10 տոկոսը»:

Ինչո՞ւ 19-րդ եւ 20-րդ դարերու գիտնականները յանգեցան այս սխալ եզրակացութեան: Պատճառն այն էր, որ այն ժամանակ դեռ չէին կրնար ամբողջովին պարզել ուղեղի բոլոր բաժիններուն եւ բջիջներուն ճշգրիտ պարտականութիւնները: Ուղեղին մէջ կան երկու հիմնական տեսակի բջիջներ. Նեարդաբջիջներ, որոնք կը կատարեն հիմնական մտածողական եւ ազդանշանային աշխատանքը:

Շերտաւորուած բջիջներ, որոնք զվաւոր դերը նեարդա-

## ԿԻՆ ԵՒ ԳՒԸ

Շարունակում է 3-էն

ձեռքերը: Մնալով առանց դաշնակիցներու եւ երկկողմ շրջափակումի մէջ, հայոց թագաւորութիւնը չորս-հինգ տարուան հերոսական դիմադրութենէ ետք տեղի տուաւ, ինչը յանգեցուց Արշակ Բ.-ի գերեզմանին:

Այդ օրհասական պահէն երկրի ղեկավարումն ու պաշտպանութիւնը ստանձնեց Փառանձեմ թագուհի՝ դառնալով հայոց դիմադրութեան գլխաւոր խորհրդանշանը:

Ան իր շուրջ հաւաքեց հայրենասէր նախարարները (ինչպէս նաեւ հայրը՝ Անուր Արշակ) եւ հաւատարմ գործը: Թագուհին 11.000 զօրքով եւ 6.000 կին ու երեխայով ապաստանեցաւ անառիկ Արտագերս ամրոց: Պարսկական հսկայ բանակը Մերուժան Արծրունիի գլխաւորութեամբ պաշարեց բերդը, սակայն արտագերսիները հերոսաբար եւ կը մղէին բոլոր գրոհները, եւ թշնամին ամրոցը զենքով գրաւել չկրցաւ...

Սակայն երկարատեւ պաշարումի պատճառով ամրոցին մէջ ծայր առնի սովն ու ծանտախտի համաճարակը, որ խլեց գործի մեծ մասին կենսաբանական օրէցօր տկարացնելով Արտագերսի պաշտպանութիւնը: 369 թուականին պարսիկները ի վերջոյ ներխուժեցին ամրոց: Շապուհ Բ. գերեզմարեց Փառանձեմ թագուհին եւ տարաւ Պարսկաստան: Հայոց դիմադրութիւնը կոտորելու եւ երկրին արժանապատուութիւնը ոտնահարելու համար, պարսից արքային հրամանով Փառանձեմ հրապարակայնօրէն տանջամահ ըրին...

Բայց թագուհիին անձնագիտութիւնը զուր չաւելաւ: Մինչ ամրոցին անկումը, Փառանձեմ յաջողած էր պատանի գահաժառանգ Պապը դրկել Հռոմէական կայսրութիւն: Շատ չանցած, Պապ արքայազն հռոմէական օժանդակ զօրքով վերադարձաւ Հայաստան՝ շարունակելու յանուն հայրենիքի ընդմիջուած պայքարը:

Սկիզբը Հռոմի Վաղէ Բ. կայսր, պարսիկներու հետ կնքուած «Ամօթալի դաշնագիրը» չխախտելու համար, պաշտօնապէս չճանչցաւ Պապը որպէս հայոց արքայ: Սակայն 370 թուականին կայացաւ արքայազնի պաշտօնական օժուժը, եւ կայսրը վերջապէս գայն հաստատեց հայոց գահին: Պատանի Արշակունիին երկիրը կառավարեց մինչեւ իր դաւադիր սպանութիւնը՝ 374 թուական: Նոյն Վաղէ կայսրը չհանդուրժեց Պապին վարած անկախ քաղաքականութիւնը եւ կազմակերպեց 21-ամեայ արքային սպանութիւնը...

\*\*\*

Այս պատմական դիմանկարները կը վկայեն, որ գահը, թագը կամ իշխանութիւնը իրեն կերտեր մեծ առաջնորդներ: Մեծութիւնը կը ծնի տեսլականէն եւ ճակատագրական պահուն պատասխանատուութիւն ստանձնելու կարողութենէ: Այս կիները տարբեր ժամանակներու, տարբեր աշխարհներու եւ տարբեր ժողովուրդներու գաւակներ ըլլալով, մեզի փոխանցած են նոյն պատգամը, որ մինչեւ այսօր կը շարունակէ ներշնչել նոր սերունդները՝ յիշեցնելով, որ պատմութիւնը կը գրուի այն մարդոց կողմէ, որոնք կը համարձակին փոխել գայն:

բջիջները իրար փակցնելն է, հիւսուածքը կազմելը, սնունդն ու պաշտպանութիւնը ապահովելը:

Քանի որ շերտաւորուած բջիջները քանակով աւելի շատ են, քան նեարդաբջիջները, սկզբնական շրջանի հետագօտողները կարծեցին, թէ անոնք որեւէ աշխուժ պարտականութիւն չունին եւ անգործ են: Այսպէս յառաջացաւ այն սխալ միտքը, թէ ուղեղին երեք քառորդը պարզապէս դատարկ տեղ կը գրաւէ եւ գործառնող չունի:

Եթէ հարցին նայինք կենսաբանական եւ եղափոխութեան տեսանկյունէն, ուղեղին 90%-ը չօգտագործելը բացարձակապէս անհնար է:

Ուղեղի նիւթափոխանակութեան յարաբերակցութիւնը, ուղեղը կը կազմէ մարդու մարմնի ընդհանուր կշիռին ընդամենը 2%-ը, օրինակ՝ 100 քիլոյի պարագային՝ 2 քիլո, 50 քիլոյի պարագային՝ 1 քիլո:

Սակայն, այս փոքր անդամը առանձին կը սպառէ մարմնի մտնող թթուածինին եւ ներուժին 20%-ը:

Եթէ ուղեղին երեք քառորդը չաշխատէր, եղափոխութիւնը երբեք թոյլ չէր տար նման շռայլութիւն: Բնութիւնը ժամանակի ընթացքին կը պոտիկցնէր այդ աւելորդ բաժինը, որպէսզի ներուժը խնայէր, ըսելով՝ «քանի որ դուն արդէն թթուածին կ'ուտես եւ երեք քառորդը չ'աշխատիր, ինչո՞ւ քեզ պահեմ կը պոտիկցնես»:

Մարմնի կառուցուածքին մէջ գոյութիւն ունի ապաճման երեւոյթը, երբ անդամ մը կամ անոր մէկ բաժնի գործածութիւնը կը նուազի, մարմինը ինքնաբերաբար կը սկսի մեղմել այդ հատուածը՝ դարձեցնելով արեան մատակարարումը: Ասիկա կը նմանի նաեւ որոշ տարիքէ ետք կրծքագեղձի կամ շագանակագեղձի մէջ յառաջացող խնդիրներու քաղցկեղի, թէեւ քաղցկեղի պարագային այլ բազմաթիւ գործոններ ալ կան: Հետեւաբար, եթէ ուղեղին 90%-ը չաշխատէր, ան պարզապէս կ'ապաճէր եւ կը մեռնէր:

Իրականութեան մէջ ուղեղը անդադար կը գործէ՝ թէ՛ արթուն, թէ՛ քնացած ատեն: Ան կը կարգաւորէ շնչառութիւնը, սրտի զարկերը, հորմոնները, մարսողութիւնը, իսկ քնացած ժամանակ ալ կը վերլուծէ երազները:

Իսկ ի՞նչ կը վերաբերի ուղեղին մէջ գոյութիւն ունեցող հայրենասիրութեան հատուածին, ապա կը տեսնենք ուղեղին դիմադրութիւնը փոփոխութիւններու նկատմամբ: Հայրենասիրութեան եւ ինքնութեան հոգեբանութիւնը նեարդաբանական կառուցուածքով կրնանք բացատրել նաեւ մարդկային համոզմունքները, օրինակ՝ խոր արմատներ ձգած հայրենասիրութիւնը: Ժողովուրդը յաճախ կ'ըսէ. «Այսինչին ուղեղը լուացուած է հայրենասիրութեամբ»:

Նեարդաբանականութեան երբ գաղափարները տարիներով կը կուտակուին եւ կ'ամրագրուին ուղեղին մէջ, ուղեղը կը ստեղծէ ապահովութեան գօտի եւ չի սիրեր փոխուիլ: Ուղեղը միշտ կը դիմադրէ նոր մտածողութեան, որովհետեւ փոփոխութիւնը մեծ ներուժ կը պահանջէ: Ասիկա կը նմանի միօրինակ ապրելակերպին. մարդիկ կը վախնան դուրս գալ ծանօթ միջավայրէն, որովհետեւ կը մտահոգուին, որ չեն կրնար ընտելանալ նորին:

Սակայն ինքնութեան փնտռումը հաւաքակա՞ն, թէ՛ անհատական ըլլալու է:

Երբ մարդուն հարցնենք՝ «Ո՞վ ես դուն», ան ընդհանրապէս նախ կը նշէ իր երկիրը, ազգը կամ կրօնը, փոխանակ ներկայացնելու իր անուն մասնական, կրթութիւնը, նախասիրութիւնները, ճիւղերն ու անձնական ձեռքբերումները:

Ինչո՞ւ մարդիկ իրենք արժանիքները կը կապեն հաւաքական գաղափարներու հետ՝ ազգ, հոշակատր գերդաստան եւ այլն: Անհատական ինքնութիւնը կը պահանջէ ինքնուրոյն աշխատանք: Եթէ փոխէս համակարգը, կրնայ հարուածուիլ քու իսկական ինքնութիւնը, ինչ որ ներքին վախ եւ մտավախութիւն կը յառաջացնէ:

Հաւաքական պատկանելիութիւնը՝ քեզ կը տանի դէպի աւելի մեծ եւ պատրաստի համակարգ: Եթէ հարցադրողը քու ընտանիքը չէ, անհատական պատկանելիութիւնը կրնայ անհետեւ թուիլ իրեն: Բայց եթէ հարցը տանիս դէպի ազգային մակարդակ, ուր հարցնողն ու պատասխանողը նոյն ազգէն են, անոնք միասին կ'ուրախանան եւ կը հպարտանան նոյն արմատներով, առանց անձնական ճիւղի: Աւելի ճիշդ կ'ըլլայ, որ մարդիկ իրենց ինքնութիւնը կերտեն սեփական ուժերով, գատորոշելով գայն երկրէն, լեզուէն կամ կրօնէն, որպէսզի «դուն՝ դուն ըլլաս»:

Հարցումի պարագային՝ նախ տան իրենց անունը, ապա ներկայացնեն իրենց գիտական կոչումներն ու արժեքները, քանզի իսկական ինքնութիւնը դուն պիտի շինես:

Իսկ հաւաքական գաղափարները, երբ անդադար կը սերմանուին առանց քննական մտածողութեան, ուղեղին՝ փոփոխութիւններ մերժելու յատկութեան պատճառով, անոնք կրնան կամայկանաբար արմատաւորուիլ եւ հետզհետէ վերածուիլ կուրորէն մոլուցքի:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսուհետեւ կրնաք օգտուիլ Առողջապահական Ապահովագրութենէն (Medical Health Insurance) մեր դարմանատան միջոցով սերտուած գիներով ինչպէս նաեւ վճարումի դիւրութիւններով:

Յաւելելով մանրամասնութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01/560 704 եւ 71/356 035

## ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradartart@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمينية تصدر عن شركة ماسيس للمطباعة والنشر (ش.م.م.)

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԻԹ

**BIJOUTERIE GARO** հաստատութիւնը կարիքը ունի՝

- Վարպետ ոսկերիչ ձեռնային աշխատանքի «սատեքեր»
- Փայլեցնող (ճիւղաճի)
- Matrix

Պուրճ Համուտի հրապարակ, AUDI դրամատան շէք, առաջին յարկ: Սեփականատեր՝ Կարո Գրիգորեան Հեռաձայն՝ 03 207 772 - 01 266514

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազուլիսիէ Հայ Ազգային բուժարանի խնամակալութիւնը եւ տնօրէնութիւնը ուրախութեամբ կը յայտարարեն, որ 22.078 ամերիկեան տոլարի նուիրատուութիւն մը ստացած են Միացեալ Նահանգներու AWWA (Ամերիկահայ Կանանց Բարեգործական Միութեան) կողմէ, բուժարանին խոհանոցի նոր սարքերու գնման համար:

Խնամակալութիւն եւ Տնօրէնութիւն Ազուլիսիէ Հայ Ազգային Բուժարանի

[www.araraddaily.com](http://www.araraddaily.com)